հոգեւոր հօրն իւրոյ Ա.թոռակալ Հաննա Յովհաննէս վրդ.ին Ս. Երուսաղիմացւոյ, եւ ծնողի իւրոյ... ի պատրիարքութեան Տն Գրիգորի եւ Տն Յովհաննու վարդապետաց ի Ս. Երուսաղէմ, ի Ս. Յակոբ, յաթոռն ամ. հայոց ի թվին ՌՃՁԳ» (=1734)։

ՊՕՂՈՍ ԱԲ. ԷՐԶՐՈՒՄՑԻ.— Մբ. 1693ին կը վախճանի Բեթղեհէմի հայոց վանքին մէջ, ինչպէս կը յիշուի Մինաս Ամդեցիի Օրագրութեան մէջ։

ՊՕՂՈՍ ԱԲ. ՈՒՌՀԱՑԵՑԻ.— Մբ. Ս. Ծննդեան վանքին մէջ 1660ին կ'ընդօրինակէ Խորհրդատետր մը իրեն համար, և կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Փառք... գրեցաւ սբ. Խորհրդատետրս ձեռամբ անարժան Պօղոս յՈւռհայեցոյ, որ անուամբ եմ աբեղա և գործովս ունայն... փափաքեցայ և գրեցի զսա յիշատակ և ծնողաց իմոց... գրեցաւ սա ի թուականիս հայոց ՌՃԹ (= 1660), (ի ս. քաղաքն Երուսաղէմ,) ի դուռն Ս. Ծընընդեան.» (Խապ. Ցուց. տետր Իէ. էջ 2029—30)։

ՊՕՂՈՍ ԱԲ.— Մբ. ՊԽ (=1391), իր ձառընտիր գիրքը կը յիշատակէ Ս. Փրկչի վանքին եւ կը պատուիրէ որ դուրս չհանեն. (ՄՁ. Թ. 589). (Խապ. Ցուց. տետր ԾԲ. էջ 4025—26)։

ՊՕՂՈՍ ՀԱՊԷՇ.— ՊՁԸ (=1439) թուին ընդօրինակուած Ս. Ներսէս Շնորհալիին Ցս. Որդի ձեռագիրը 1674 ին կը նուիրէ Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքին. նոյն ձեռագիրը այժմ կը գտնուի Վատիկանի հայերէն ձեռագիրներու մատենադարանը (Թ. 4.) որմէ կը քաղենք հետեւեալ յիշատակարանը, «Ես հարաշ Պօղոսս յիշատակ տվի զայս Ցս. Որդիս ի Սբ. Փրկչի վանքն։ Թվն. ՌՃԻԴ (=1674) ի Սբ. յԵրուսաղէմ.» «փառք... արդ գըրեցաւ սա ի թվականութեանս հայոց ՊՁԸ (=1439) ձեռամբ մեղապարտ գրչի Աբրահամ աբեղի. յիշատակ ինձ և ծնողաց իմոց և...». (Tisserant. էջ 5—6)։

ՊՕՂՈՍ ՄՈՄԱՎԱՃԱՌ.— Քրձ. 1887ին իր ծախքովը Բեթղեհէմի մէջ շինել կուտայ մթերանոց մը, ի նպաստ Ս. Աթոռոյ։

ՊՕՂՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆՑ, ԵՐԵԻԱՆՑԻ.— Վաճառական. 1866ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Եսայի պտրք.ի առաջարկութեան վրայ՝ Ս. Յակոբին կը նուիրէ 400 օխայ ծանրութեամբ զանգակ մը, որ վանք կը բերուի 1868 Օգոստոսին. (Սիօն. 1868. էջ 188)։